ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# «ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ...»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Պատահական չէր, որ Զբիգնեւ Բժեզինսկին գտնում էր, որ ԱՄՆ-ում հայկական լոբբին Ամերիկայի ազգային լոբբիստների թվում արդյունավետներից մեկն է: Երկրում գործում է ավելի քան 120 հայկական եկեղեցի: Հայերով հոծաբնակ վայրերում գործում են հայկական ազգային դպրոցներ, լույս են տեսնում հայկական թերթեր եւ ամսագրեր:

Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ընտանիքով ԱՄՆ-ում ապրել եմ 1991 թվականից մինչեւ 2007 թվականի վերջը եւ այնտեղ հասարակական ու մարզչական ակտիվ գործունեություն էի ծավալել:

***- Գտնում են, որ համաշխարհային հայկական սփյուռքն ի վիճակի է ազդեցություն գործել միջազգային գործընթացների վրա: Ինչպիսի՞ն է նրա դերը Հայաստանի ինքնիշխանության ամրապնդման եւ զարգացման գործում:***

- Արդի աշխարհում, հայկական սփյուռքը, հրեական եւ չինական համայնքների հետ կարելի է առնչել այսպես կոչված «համաշխարհային» համայնքներին: Նրա համար բնորոշ է բնակության երկրներում համախմբված եւ կայուն էթնիկական խմբերի հիմնումը, որոնք ունեն իրենց նույնականության աջակցության եւ զարգացման տարածված սոցիալական ինստիտուտները: Բնականաբար, հայկական սփյուռքն իրենց ներկայացնում է հասարակական ակտիվ ուժ, որն ի վիճակի է ազդեցություն գործել նշանակալի քաղաքական եւ տնտեսական գործընթացների վրա: Հայկական սփյուռքի հնարավորությունները պայմանավորված են բնակության երկրով եւ կախված են մի շարք գործոններից՝ պետության քաղաքական կառուցվածքը, հիմնական բնակչության կրոնական պատկանելությունը եւ այլն: Բացի այդ, հետխորհրդային ժամանակամիջոցում հիմնվեցին այսպես կոչված «նոր» համայնքներ, որոնք գլխավորապես գտնվում են ԱՊՀ եւ Կենտրոնական Եվրոպայի երկրներում: Միաժամանակ, արդյունավետորեն գործում են հիանալիորեն կազմակերպված հայկական համայնքները ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, եվրոպական մի շարք երկրներում, Լատինական Ամերիկայի, Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում: Առանձին երկրներում հայկական համայնքների գործունեության արդյունավետությանը կարելի է հետեւել մի շարք երկրների կողմից 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման աշխարհագրությամբ: Մի խոսքով, դժվար է գնահատել այն վիթխարի ավանդը, որ ներդրել է մեր համայնքը հայ ժողովրդի այդ վիթխարի ողբերգության միջազգային ճանաչման գործում:

Հայաստանը սփյուռքն ընկալում է որպես «հայություն» ընդհանուր հասկացության անկապտելի մաս ու գործոն, որն ի վիճակի է նպաստել ոչ միայն պետության զարգացմանը, այլեւ էականորեն ամրապնդել նրա դիրքերը միջազգային հարաբերություններում: Կբերեմ միայն երկու օրինակ: ԽՍՀՄ փլուզումից հետո, ԱՄՆ-ում հայկական լոբբին հասավ ԱՊՀ երկրների միջեւ Հայաստանի համար իր չափերով ամենամեծ մարդասիրական օգնության: 1990-ական թվականների վերջին եւ 2000 թվականների սկզբին կառավարության գծով դրա ծավալը Հայաստանի համար հասավ 239 միլիոն դոլարի: Երկրորդ օրինակը. Ֆրանսիայի Սենատը եւ Ազգային ասամբլեան 2000 թվականին պաշտոնապես ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը: 2001 թվականի սկզբին, նախագահ Ժակ Շիրակի կողմից Ցեղասպանության ճանաչման օրենքի ստորագրումից հետո, Ցեղասպանության զոհերի ժառանգներ Ֆրանսիայի քաղաքացիներին, ովքեր համարվում էին զոհեր, տրվեց Անկարայի կառավարությունից դրամական փոխհատուցում պահանջելու իրավունք: Բնականաբար, մեր երկրի ղեկավարության, ՀՀ սփյուռքի նախարարության առջեւ դեռեւս ծառացած են սփյուռքի հետ հարաբերությունների արդյունավետության հետագա բարձրացման հետ առնչվող բազում խնդիրներ:

***- 40 տարի առաջ Դուք սահմանեցիք առաջին համաշխարհային ռեկորդը: Դրանից հետո, երբ Դուք նվաճեցիք օլիմպիական եւ համաշխարհային բարձունքները, սկսեցիք աշխատել երկրի կառավարությանն առընթեր, իսկ հիմա գործում եք դիվանագիտական ասպարեզում: Հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը եւ աշխարհում ստեղծված ծայրաստիճան բարդ իրավիճակը՝ հայ դիվանագետները պետք է ցուցաբերեն «բարձրագույն սավառնավարություն»: Իսկ որտե՞ղ էր ավելի դժվար՝ սպորտո՞ւմ, թե՞ դիվանագիտական ասպարեզում:***

- Ձեր հարցի պատասխան կարող են դառնալ երկու թեւավոր մտքեր: Դրանցից մեկը առնչվում է օլիմպիական շարժման հիմնադիր Պիեռ դե Կուբերտենին, ով իր «Գովերգ սպորտին» աշխատության վերջում գրում է. «Օ՜, սպորտ, դու խաղաղություն ես»: Այդ արտահայտություն-կարգախոսը նա դրեց օլիմպիական շարժման հիմքում՝ վերականգնելով հին հույների ավանդույթները, ովքեր օլիմպիադայի ժամանակ դադարեցնում էին պատերազմները: Հիշենք եւս մեկ, համընդհանուր ճանաչման արժանացած արտահայտություն՝ «Երբ դիվանագետները խոսում են, թնդանոթները լռում են»: Ինչպես սպորտը, այնպես էլ դիվանագիտությունը ծառայում են մի նպատակի՝ պահպանել խաղաղություն, թեպետ տարբեր միջոցներով, սակայն մեխանիզմը մեկն է՝ առաջադրում ես նպատակ, աշխատում արդյունքի հասնելու համար, իսկ հասնելուց հետո, աշխատում ես այն բարելավել:

Դուք իրավացի եք, որ Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, երկրի առջեւ ծառացած մարտահրավերներն ու խնդիրները մեր դիվանագետներին կանգնեցնում են արտակարգ ճկունության, իրավաճակի փոփոխության նկատմամբ արագ արձագանքելու ունակության անհրաժեշտության առջեւ, եւ այդ ամենը պետք է հենվի հայրենասիրության ու հայրենիքին նվիրվածության զգացումի վրա: Դաժան դպրոց է, սակայն այն թույլ է տալիս կարճ ժամանակամիջոցում պատրաստել լավ մասնագետներ: Ահա արդեն քառորդ դար է՝ մեր արտաքին քաղաքական գերատեսչությունը շարունակում է հաջողությամբ լուծել առաջադրված բարդ հարցերը: Ինձ համար մեծ պատիվ է, որ հնարավորություն տրվեց Վրաստանում Հայաստանի դեսպանի պաշտոնում առավելագույնս օգտագործեմ իմ՝ պետական, հասարակական եւ մարզական գործչի փորձը՝ ի բարօրություն մեր բարեկամական երկրների միջեւ հարաբերությունների զարգացման:

***- Դուք հանդիպե՞լ եք Ձեր գործընկեր, Շվեյցարիայում ՀՀ դեսպան Շառլ Ազնավուրի հետ:***

- Ինձ շատ անգամ է բախտ վիճակվել տարբեր միջոցառումների ժամանակ հանդիպելու այդ հիանալի, պայծառ ու իմաստուն մարդու հետ: Բնականաբար, մենք միմյանց ծանոթ ենք: Ես խորին հարգանք եմ տածում այդ մեծ երգչի ու կոմպոզիտորի, մեծատառով Հայի նկատմամբ համաշխարհային երաժշտական մշակույթի զարգացման գործում ներդրած ավանդի եւ այն ամենի համար, ինչ նա արեց եւ՝ որպես Հայաստանի դեսպան, շարունակում է անել հայ ժողովրդի համար:

*ՄԻՐԱՆԴԱ ՕԳԱՆԵԶՈՎԱ*

ՊՐԵՄԻԵՐԱ

# ԵԿԵՔ ՊԱՐԵՆՔ ՏԱՆԳՈ

***Այսպես է կոչվում ժամանակակից վրաց տաղանդավոր դրամատուրգ Նինո Միրզիաշվիլու պիեսը, որի պրեմիերան ադամյանցիները ներկայացրեցին Թբիլիսիի Ա.Գրիբոյեդովի անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի փոքր դահլիճում:***



Հոյակապ, ընդամենը մեկ ժամ 15 րոպե տեւողությամբ կատակերգությունը, որը նույնչափ հոյակապ իրականացրեցին Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի տաղանդաշատ ռեժիսոր Լեւոն Ուզունյանն ու պիեսում զբաղված դերասանները, հանդիսատեսի համար անցավ ակնթարթորեն: Այնքան գրավիչ, հուզախառն եւ միեւնույն ժամանակ զվարճալի էր ինչպես ռեժիսորական լուծումը, այնպես էլ նկարչական, երաժշտական ու հնչյունային ձեւավորումը, զգեստների ընտրությունը:

Հանդիսատեսը, ինչպես նաեւ թբիլիսցի թատերասերները բարձր գնահատեցին երիտասարդ դերասաններ Սերգո Սաֆարովի (Կոտե), Քրիստինե Թումասյանի (Նելլի), Արթուր Գրիգորյանի (Գիորգի), Լիանա Օգանեզովայի (Նատո) եւ Աշոտ Սիմոնյանի (Բեքա) դերասանական վարպետությունը:

Ներկայացման ժամանակ հանդիսատեսը, ինչպես սովորական, որ թատրոն է գալիս միայն հաճույք ստանալու, այնպես էլ մասնագետ թատերագետը այնպես «տարվեցին» ռեժիսորական մոտեցման, գեղարվեստական ձեւավորման եւ, իհարկե, դերասանների խաղով, որ ժամանակ առ ժամանակ կարծես մոռանում էին, որ թատրոնում էին գտնվում:

Ասենք, որ այս պիեսը Նինո Միրզիաշվիլու համար դեբյուտ է դրամատուրգիայում: Առաջին անգամ այն բեմադրվեց անցյալ տարի Թբիլիսիի հանրաճանաչ Մ.Թումանիշվիլու անվան թատրոնում, ապա՝ Վրաստանի այլ քաղաքներում:

Է՛լ ավելի ես զարմանում ու հիանում, երբ իմանում ես, որ պիեսի հեղինակը մասնագիտությամբ քիմիկոս է, քիմիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր:

Բեմադրության հեղինակը Լեւոն Ուզունյանն է: Պիեսը վրացերենից հայերեն թարգմանել է թատրոնի գրական բաժնի վարիչ Սիրանուշ Մանուկյանը:

Պիեսը երկու հարեւան ընտանիքների մասին է, ովքեր պայքարում են հավատարիմ սիրո եւ մարդկային այլ բարձր արժեքների համար: Գործողությունները բեմում ընթանում էին աշխույժ, դինամիկ զարգացումներով:

Երբ ավարտվեց պրեմիերան, հանդիսատեսը բուռն ծափահարություններով ողջունեց ռեժիսորին, դերասաններին, եւ երբ Լեւոն Ուզունյանը դահլիճին ներկայացրեց



պիեսի հեղինակին, ով նստած էր 4-րդ կարգում, եւ երբ ոտքի կանգնեց Նինոն, ծափահարություններն էլ ավելի ուժգնացան:

Պրեմիերային ներկա էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

*Նկարներում .- Բեմադրող ռեժիսոր Լեւոն Ուզունյանը եւ երիտասարդ դերասանները: Պիեսի հեղանակ Նինո Միրզիաշվիլին:*

*Լուսանկարները՝ ՅՈՒՐԻ ԱԿՈՒԼՅԱՆԻ*

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ՄՐՏԻՑ ԲԽԱԾ ԳՐՔԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՈՒԺԸ

***Հոկտեմբերի 17-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնում, տեղի ունեցավ ճանաչված մտավորական Աղասի Գեւորգյանի վերջերս լույս տեսած «Լինենք ազնիվ ու բարի» եռալեզու (հայերեն, վրացերեն, ռուսերեն) գրքի շնորհանդեսը, որին մասնակցում էին հայ, վրացի մտավորականներ, հոգեւոր դասի ներկայացուցիչներ: Դա հայ եւ վրաց հոգեւոր շփումների գեղեցիկ հանդիսություններից մեկն էր:***

Բանաստեղծ-թարգմանիչ, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի Գիվի Շահնազարը, ներկայացնելով իր ճանաչած Աղասի Գեւորգյան մարդուն ու մտավորականին, ողջունեց նրա անդրանիկ գիրքը՝ «Պոեզիայի լեզվով ասելիքը»:

Բանասեր, պրոֆեսոր Էմմա Ախտյանն անդրադարձավ հեղինակի հետ Թբիլիսիի Պուշկինի անվան (այժմ՝ Իլիայի պետհամալսարան) մանկավարժական ինստիտուտում համատեղ աշխատանքին եւ դրանում Գեւորգյանի առանձնակի ակտիվ ու եռանդուն դասախոսական գործունեությանը:

- Աղասի Գեւորգյանին ճանաչել եմ որպես հայրենասեր, որպես վրաց ազգը սիրող եւ որպես ակտիվ մարդ եւ ուրախ եմ, որ այժմ ճանաչեցի նաեւ որպես պոետ,- ասաց բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Իրինե Կոբախիձեն:

- Գիրքը ներշնչում է լավատեսություն: Համոզված եմ, որ Ա.Գեւորգյանի եռալեզու այս ժողովածուում ընթերցողը կգտնի իր մարդկային ապրումներին հոգեհարազատ տողեր, ինչը եւ, կարծում եմ, արդեն հաղթանակ է,- իր խոսքում նշեց Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող Կարինե Մանուկյանը:

Վրաց Ուղղափառ Սուրբ եկեղեցու Անդրեա նախավկայի անվան համալսարանի ռեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Սերգո Վարդոսանիձեի խոսքը հագեցվեց հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամության գեղեցիկ ու հիշելի փաստերով. «Այստեղ ես ինձ զգացի հարազատ, ընտանեկան շրջապատում, եւ դա հասկանալի է՝ մենք ունենք ընդհանուր քրիստոնեական հավատք: Սիրով ողջունում եմ Աղասի Գեւորգյանի գիրքը, որը հավասարապես հարազատ է ձեզ եւ մեզ»:

Գրքի ռուսերեն եւ վրացերեն թարգմանությունների հեղինակներ, բանաստեղծներ Մարինա Մոսեսովա-Կիրակոսյանը եւ Գարրի Ղալամքարովը այդ լեզուներով ընթերցեցին Աղասի Գեւորգյանի բանաստեղծություններից:




Վրացերեն թարգմանությունը, Ղալամքարովի հետ համատեղ, կատարել է բանաստեղծ Ավթո Ջխաիձեն:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի խոսքը երկու քրիստոնյա ժողովուրդների պատմականորեն ձեւավորված եղբայրական բարի ավանդույթների մասին էր:

- Քրիստոնյաները հարուստ են իրենց ստեղծարար մարդկանցով, դրանցից մեկը՝ Աղասի Գեւորգյանը, հայ-վրացական մշակութային կապերի կրողն է,- ասաց Սրբազան հայրը:

Ելույթ ունեցողներից շատերը ընդգծեցին գրքի պոլիգրաֆիական հաջող ձեւավորումը:

- Ես գրող չեմ, սակայն մեկ տարի առաջ, մի գեղեցիկ օր ներսից եկող ինչ-որ պահանջ ինձ ստիպեց ձեռքս գրիչ վերցնել ու մտքերս թղթին հանձնել,- ասաց Աղասի Գեւորգյանը եւ իր խոսքն ավարտեց շնորհակալական ջերմ ողերձով:

Երեկոյի գեղարվեստական բաժնում իրենց մասնակցությունն ունեցան Աղասի Գեւորգյանի թոռները՝ Էլեոնորա, Դավիթ Գեւորգյանները ու Դավիթ Կապանաձեն:

«Հայարտուն» կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը, ով նաեւ վարեց երեկոն, նույնպես հանդես եկավ Ա.Գեւորգյանի բանաստեղծությունների ընթերցումով:

*ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

*Նկարում.- Մարինա Մոսեսովա-Կիրակոսյանը, Աղասի Գեւորգյանը եւ Գարրի Ղալամքարովը:*

*Լուսանկարը՝ ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՈՎԻ*

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ✵ ²ÚÈ²¼²Ü ✵ ÊàðÐàôð¸Üºð

Î°Üê²Î²Ü

# ՄԱԶԵ՞Ր, ԹԵ՞ ԾԽԱԽՈՏ



***Վերջերս նկատել եմ, որ մազերս թափվում են: Դիմել եմ բժիշկների, փարբեր խորհուրդներ են փալիս՝ սկսած ինչ-որ դիեփաների պահպանումից, մինչեւ առանձնահափուկ դեղորայքի ընդունումը: Բարեկամներիցս մեկը խորհուրդ փվեց թողնել ծխելը, ասաց, որ դրանից են մազերը թափվում: Ճի՞շտ է, արդյոք դա:***

***Ա. Գեւորգյան***

***Թբիլիսի***

Ձեր բարեկամի խորհուրդը տրամաբանական արմատներ ունի: Այսպես, բժիշկների կողմից անցկացված հետազոտություններն ապացուցել են, որ ճաղատացման գործում պակաս դեր չի խաղում ծխախոտի հանդեպ կիրքը: Որքան մարդը շատ է ծխում, այնքան ավելի ջանադրաբար են նրա մազերը գլխին հրաժեշտ տալիս: Բանն այն է, որ ծխելիս արյան մեջ այնպիսի նյութեր են հայտնվում, որոնք կործանարար ազդեցություն ունեն մակերեսային արյունատար համակարգի, ինչպես նաեւ ամբողջ սրիտ-անոթային համակարգի վրա: Մազարմատները բավարար քանակությամբ սնունդ չեն ստանում, համապատասխանաբար, մազերի աճը դանդաղում է, իսկ ժամանակի ընթացքում դրանք սկսում են թափվել: Ժառանգական պատճառներով մազաթափության հակում ունեցող մարդկանց մոտ մազաթափությունն արագանում է: Խիտ մազեր ունեցողների մոտ մազերը նոսրանում են եւ կորցնում նախկին փայլը:

Եվ այսպես, բժիշկները եւս մեկ պատճառ են գտել կործանարար սովորույթից հրաժարվելու համար: Եթե դուք չեք ցանկանում բաժանվել ձեր մազերից, թողեք ծխելը:

ÜàðàôÚÂ

# ՄԱՐԴՈՒՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ԻՆՏԵԼԵ՞ԿՏ



***Այսօրվա գիփա-փեխնիկական դարի պայմաններում մեզ դժվար է զարմանցնել նոր հայփնագործություններով: Թեպեփ լինում են դեպքեր, երբ սփիպված ես լինում մփածել՝ որքա՞ն կարելի է բացառել այնպիսի սարքի սփեղծումը, որը գերազանցի մարդուն մփածողությամբ, ընկալմամբ, եւ ժամանակին այդ սարքը չի սփանչնի անմիջականորեն մարդուն ղեկավարելու գործառույթը: Որքա՞ն է սա իրափեսական:***

***Վ. Վարդանյան***

***Նինոծմինդա***

Ցավոք, դուք իրավացի եք, ձեր նկարագրած իրավիճակը բավականին իրատեսական է: Այսպես, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ծրագրավորողները գիտական տվյալների վերլուծության համար մշակել են արհեստական ինտելեկտի համակարգ, որը մարդուն գերազանցում է ինտուիցիայով եւ տեղեկատվության մեծ զանգվածների վերլուծության մեջ ավելի հաջող ուղղություն գտնելու կարողությամբ:

«Տվյալների վերլուծության մեր մեքենան ոչ թե փոխարինում, այլ լրացնում է մարդու ինտելեկտը: Այժմ գիտնականներն այնքան շատ տվյալներ ունեն, որոնք կարելի է վերլուծել, մինչդեռ ներկայում մեր համակարգը ոչինչ չի անում: Գուցե մենք արդեն այժմ կարող ենք սկսել այն օգտագործել կուտակված այդ գիտական տեղեկատվության փաթեթի մշակման համար»,- հայտարարել է Մաքս Քանթերը՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտից արհեստական ինտելեկտի ստեղծողներից մեկը:

Ինչպես պնդում են Քանթերը եւ համալսարանական նրա գործընկերները, այդ սարքը կարող է հեղաշրջում առաջացնել գիտական տվյալների զանգվածների վերլուծության բնագավառում: Այն կարող է ընդամենը 8-12 ժամվա ընթացքում ընտրել տեղեկատվության մշակման ճիշտ ալգորիթմը, որը գտնելու համար գիտնականները սովորաբար ծախսում են մոտավորապես մեկ ամիս:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

# ՀՈՍՈՂ ԳԵՏԵՐ՝ ՄԱՐՍԻ ՎՐԱ



NASA-ն հայտարարել է Մարսի գլխավոր գաղտնիքի բացահայտման մասին. մոլորակի վրա հայտնաբերվել են գետեր՝ հեղուկ աղաջրի սեզոնայնորեն հայտնվող հոսքեր: Այս մասին գործակալությունը հաղորդել է սեպտեմբերի 28-ին հատուկ դրա համար կազմակերպված մամուլի ասուլիսի ժամանակ: Միջոցառումն ուղիղ եթերով հեռարձակվել է NASA Television-ով եւ գործակալության կայքում, իսկ դրա հիմնական արդյունքները հրապարակվել են Nature Geoscience-ում:

Մամուլի ասուլիսի եւ հրապարակման գլխավոր եզրակացությունն այս է՝ ներկայում Մարսի վրա գոյություն ունեն հեղուկ աղաջրի հոսքեր: Այդ գոյացություններն ի հայտ են գալիս տարվա տաք եղանակին եւ անհետանում են ցուրտ ժամանակ: Մոլորակագետներն այս եզրակացությանը հանգել են՝ վերլուծելով այն բարձրորակ լուսանկարները, որոնք ստացվել են Mars Reconnaissance Orbiter (MRO) մարսյան ուղեծրային ապարատի High Resolution Imaging Science Experiment (HiRISE) գիտական գործիքի միջոցով:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

## ՕԳՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

*Ամբողջ աշխարհում մասնագետները հիմա քննարկում են՝ համակարգչից կախվածությունը դասե՞լ մյուս մոլուցքների՝ թմրամոլության, ալկոհոլիզմի, ծխախոտից կախվածության շարքին, թե՞ ոչ: Բայց մինչեւ նրանք կորոշեն, ամեն վայրկյան այդ զարմանահրաշ սարքն ավելի ու ավելի է մխրճվում մեր կյանք:*

Համակարգիչն առավել արագությամբ ու խորությամբ կլանում է հատկապես երեխաներին: Ընդունված է, որ համակարգչի առջեւ 2 ժամից ավելի նստելն արդեն նշանակում է, որ կա համակարգչից կախվածության միտում, իսկ եթե այդ ժամանակն արդեն գերազանցում է 4 ժամն ու ավելին, այս դեպքում արդեն ծնողները պետք է անհանգստանան: Համակարգիչը երեխային կարող է եւ ֆիզիկական ու հոգեբանական լուրջ վնասներ հասցնել:



Հոգեբանների խոսքերով, մինչեւ 5 տարեկան երեխաների համար համակարգիչը կարող է տեղեկատվության հարուստ աղբյուր լինել, եթե իհարկե ծնողները հսկեն ու ուղղորդեն այդ տեղեկատվությունը: Նաեւ խաղեր կան, որոնք կնպաստեն այդ տարիքի երեխաների զարգացմանը: Բայց ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ, այս դեպքում՝ նաեւ անվտանգ:

Համակարգչի առաջ ամեն օր 2 ժամից ավելի նստելը այդ տարիքի երեխաների մոտ կարող է ողնաշարի լուրջ խնդիրներ առաջացնել, ինչը հետագայում շատ դժվար կլինի շտկելը: Հենց համակարգիչն է պատճառը, որ այսօր երեխաների ու դեռահասների մեծ մասն ունի ողնաշարի ծռություն:

Երեխաները, որպես կանոն, համակարգչին նայում են լարված աչքերով: Սա մի քանի անգամ մեծացնում է տեսողության լարումը, ինչն էլ, իր հերթին, ժամանակի ընթացքում կհանգեցնի տեսողական ամենատարբեր խնդիրների:

Երեխայի ֆիզիկական առողջությունը վնասող երրորդ՝ ամենակարեւոր վնասն էլ այն է, որ, համակարգչի առաջ նստելով, երեխան արդեն վարժվում է նստակյաց կյանքի: Դա այն տարիքն է, երբ երեխան պետք է վազի, խաղա ու ցատկի, բայց, համակարգչի առաջ նստելով, նա այդ ամենն անում է խաղերի հերոսների միջոցով՝ ընդամենը շարժելով մկնիկը:

Հոգեբանների խոսքերով, այս ֆիզիկական խնդիրները մի կողմ, համակարգիչը նաեւ երեխայի փխրուն հոգեբանությանը կարող է անդառնալի վնասներ հասցնել: Ծնողները շատ հաճախ ուրախանում են, երբ երեխան համակարգչի առաջ է նստում, քանի որ իրենց այդ ընթացքում չի անհանգստացնում ու չի խանգարում զանազան պահանջներով: Իրենք էլ հանգիստ անցնում են իրենց գործին: Բայց այդ ընթացքում երեխան, իր կամքից անկախ, համացանցի սարդոստայնում ամենատարբեր էջերում կարող է հայտնվել: Պրակտիկայում եղել են դեպքեր, երբ, օրինակ, 3-րդ դասարանցի երեխան հայտնվել է աղանդավորական ինչ-որ կազմակերպության կայքում եւ, լսելով նրանց ուսմունքն ու քարոզները, աստիճանաբար կտրվել է հասակակիցներից ու մեկուսացել: Բռնություն, պոռնոգրաֆիա տարածող կայքերն էլ այսօր հասանելի են ու երեխաների առաջ ամենեւին էլ փակված չեն:

Ծնողներին հոգեբանը խորհուրդ է տալիս՝ երեխային համակարգչի առաջ երկար մենակ չթողնել, անընդհատ ուշադրության կենտրոնում պահել, թե նա ինչպիսի կայքերում է թափառում:

ԽՈՐՀՈՒՐԴ

# ԻՆՉՊԵՍ ԵՐԿՈՒ ՕՐՈՒՄ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԳՐԻՊԸ

*Մտեք դեղատուն եւ գնեք սոճու յուղ: 5-6 ժամը մեկ շփեք հիվանդի կուրծքը, ձեռքերը, ոտքերը, մեջքը (եթե այդ բույսից ալերգիա չունի): Մեկ շփման համար բավական է 4-5 գրամը, ավելին պետք չէ, քանի որ կարող է վնասել:*

**Հարբուխի դեպքում.** յուղը կարելի է կաթեցնել քթի մեջ 1-ական կաթիլ: Կնրմռացնի, հիվանդը կփռշտա, արցունքներ կհայտնվեն, քթից լորձ կծորա, սակայն 20 րոպեից կանցնի, եւ նա կթեթեւանա:

**Կրծքում խզոցի եւ հազի դեմ.** Եռացրած ջրում շոգեխաշել կաղամբի թերթը մինչեւ փափկի: Հանել, շերտի մի կողմում մեղր քսել (եթե ալերգիա չկա) եւ դեռեւս տաք վիճակում դնել կրծքին: Սկզբում ծածկել անձեռոցիկով, դրա վրայից էլ՝ շարֆով եւ թողնել մինչեւ սառչի: Շատ է օգնում նաեւ երեխաներին: 2-3 օրից հազից ու խզոցից նույնիսկ հետք չի մնա:

# ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մանկությա՜ն օրեր, ինչո՞ւ այդպես շուտ թռաք գնացիք, անդարձ հավիտյան...

***Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ***
***(1829-1866)***
***Հայ գրող, հրապարակախոս***

Միշտ ցույց տալով, խրատելով պետք է մանկանն ուսուցանել՝ ո՞վ է, ի՞նչ է, որտեղի՞ց է, ո՞ւր կարող է ճամփան տանել:

***ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ***
***(1705-1791)***
***Վրաց բանաստեղծ***

Միայն բանականությանը՝ որպես իմաստուն խնամակալի, պետք է վստահել ամբողջ կյանքում:

***ԼՈՄՈՆՈՍՈՎ***
***(1711-1765)***
***Ռուս գիտնական***

Նախատակության աստիճանի բարեկամ եղիր ճշմարտությանը, բայց մի՛ եղիր անհանդուրժելի աստիճան նրա պաշտպանը:

***ՄԱՐԱՏ***
***(1743-1793)***
***Ֆրանսիացի մեծ հեղափոխության գործիչ, գիտնական, հրապարակախոս***

Սերը յուրաքանչյուրի համար ինքնատիպ է դրսեւորվում: Այն պետք չէ նկարագրել նույնիսկ ամենագեղեցիկ բառերով: Այն միայն հնարավոր է ապացուցել սրտաբուխ արարքներով եւ հավատարմությամբ:

***ԴԻՈԳԵՆԵՍ***
***(մ.թ.ա.412-մ.թ.ա.323)***
***Հույն փիլիսոփա***

Այն, ինչի համար մարդ մեռնում է, պարտադիր չէ , որ ճշմարտություն լինի:

***ՈՒԱՅԼԴ***
***(1854-1900)***
***Բրիտանացի հանրաճանաչ բանաստեղծ***

Եթե դա ճիշտ է, ապա բոլորովին էլ վատ չի հորինված:

***Մ.Ավագյան***
***«Վրաստանի» ընթերցող***

²Ü°Î¸àîÜ°ð

** Հանդիպում են երկու ծրագրավորող:*

*- Լսել եմ՝ ամուսնացել ես...*

*- Հա:*

*- Բա կնոջդ անունն ի՞նչ է:*

*- Կարի... չէ, Անահ... մի խոսքով ICQ#9876543210*

** - Ինչպե՞ս բացատրեմ մամայիս, որ եթե համակարգիչը աշխատի մի ժամից ավելի... չի պայթի:*

** Դուք էլ եք ինձ նմա՞ն. երբ չեք հասկանում՝ չաթով ի՞նչ են ասում... սմայլիկ եք ուղարկում, որ թեման փակվի՞:*

** - Ես լավատես եմ, ես լավատես եմ, ես լավատես եմ... Մեկ է՝ բոլորս մեռնելու ենք... Ես լավատես եմ, ես...*

** Երբ քեզ ասում են՝՝ «Մենակ ճիշտն ասա», հասկանում ես, որ պետք է ստես՝ ուղիղ աչքերի մեջ նայելով:*

** Կանացի տրամաբանություն. «Ուրեմն դու ինձ հետ համամի՞տ ես: Ուշ է: Ես արդեն փոշմանել եմ:*

** Ճանապարհային ոստիկանությունում.*

*- Դուք հարբած վիճակում վրաերթի եք ենթարկել մի կնոջ:*

*- Պարոն կապիտան, սթափ վիճակում չէի կարողանա... այնուամենայնիվ, կինս է....*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ՝ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՐԱՇԽԻՔ

*Աշխատանքային այցով Իսպանիայում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 21-ին Մադրիդում մասնակցեց Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) համագումարին: Այն վարեց ԵԺԿ նախագահ Ժոզեֆ Դոլը:*

Համագումարին մասնակցեցին Եվրոպական խորհրդի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահներ Դոնալդ Տուսկն ու Ժան-Քլոդ Յունկերը, ԵՄ անդամ եւ Արեւելյան գործընկերներ երկրներից՝ ԵԺԿ-ին անդամակցող կուսակցություններ ներկայացնող պետությունների եւ կառավարությունների ղեկավարներ:

Համագումարի օրակարգի շրջանակներում, ԵԺԿ նախագահի ընտրություններն են, կուսակցության նոր ծրագրի, ինչպես նաեւ կանոնադրության փոփոխությունների քննարկումն ու հաստատումը: Համագումարի պատվիրակների ուշադրության կենտրոնում են համաեվրոպական նշանակության հարցերը, նաեւ՝ փախստականների խնդիրները, տնտեսական ճգնաժամի հետեւանքներն ու դրանց հաղթահարման հնարավորությունները: Անդրադարձ կատարվեց եվրոպական հարեւանության խնդիրներին, Արեւելյան գործընկերության ոլորտում առկա զարգացումներին, միջազգային արդի մարտահրավերներին:

Հայաստանի նախագահը իր խոսքում առանձնակի ուշադրություն հատկացրեց Եվրամիության հետ ձեւակերպման փուլում գտնվող նոր փաստաթղթի վրա՝ շեշտելով, որ այն Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների նոր մակարդակի երաշխիքն է:

## ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ 700 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԾՐԱԳՐԵՐ



*ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 20-ին ընդունել է Համաշխարհային բանկի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով նորանշանակ փոխնախագահ Սիրիլ Մյուլերին:*

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել Համաշխարհային բանկի հետ Հայաստանի երկար տարիների համագործակցությունը եւ կարեւորել բանկի դերը սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Նշվեց, որ անցած տարիների ընթացքում Համաշխարհային բանկն արդեն նախատեսել է մի շարք ծրագրեր, որոնց իրականացումը Հայաստանում մոտ 700 մլն ԱՄՆ դոլար կարժենա: Հայաստանի զարգացման համար այդ ծրագրերի իրականացումը, Սիրիլ Մյուլերի համոզմամբ, կարեւոր նշանակություն կունենա:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին Հայաստանի հետ ՀԲ-ի գործընկերության ռազմավարության ներկայիս ծրագրի իրականացման ընթացքը, անդրադարձան նաեւ Հայաստանի տնտեսական քաղաքականության առաջնահերթ ուղղություններին, միջնաժամկետ կայուն տնտեսական աճի համար անհրաժեշտ հիմքերի ապահովման խնդիրների:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանդիպում է ունեցել Եվրասիական զարգացման բանկի վարչության նախագահ Դմիտրի Պանկինի հետ:*



Հանդիպմանը Հայաստանի վարչապետը բարձր է գնահատել Եվրասիական տնտեսական ընկերակցության Հակաճգնաժամային հիմնադրամի գործունեությունը Հայաստանում: Հիմնադրամի հետ հաջողված համագործակցության արդյունք է համարել «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն. 4-րդ փուլ» նախագծի ֆինանսավորման համար 150 մլն ԱՄՆ դոլարի կնքված համաձայնագիրը, որի շրջանակում հաջող ընթացքի մեջ են աշխատանքները:

Հովիկ Աբրահամյանը կարեւորել է «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի համար նախատեսվող 40 մլն ԱՄՆ դոլարի ներդրումային վարկային համաձայնագրերի նախատեսվող ստորագրումը:

Իր հերթին, Դմիտրի Պանկինը կարեւորեց համագործակցության խորացումը՝ ուղղված տնտեսության տարբեր ոլորտների զարգացմանը:

Զրուցակիցները քննարկեցին Հայաստանի կառավարության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ փոխգործակցության հետագա ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցեր:



## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՈՒԹ ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

*Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի ներկայությամբ, ստորագրվեցին Հայաստանի կառավարության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ համագործակցության զարգացմանը վերաբերող մի շարք փաստաթղթեր:*

Ստորագրվել է Հայաստանի եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Երեւանի կոշտ թափոններ. փուլ 1» 8 մլն եվրո արժողությամբ ֆինանսական պայմանագիրը, կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտում համագործակցելու պատրաստակամության մասին փոխըմբռնման հուշագիրը, «Մ6-Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման ճանապարհի վերականգնման եւ բարելավման ներդրումային ծրագրի» մտադրությունների մասին հռչակագիրը: Հռչակագրով կողմերը հաստատում են իրենց հետաքրքրությունն ու պատրաստակամությունը՝ համագործակցելու եւ Վանաձորից Բագրատաշեն 90 կմ երկարությամբ Մ6 միջպետական ճանապարհի վերականգնման ու արդիականացման ծրագիրն իրականացնելու վերաբերյալ:

## ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ՝ ԾԱԽՍԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՄԱՐ

*Սեպտեմբերին սպառված էլեկտրաէներգիայի դիմաց բնակչությանը եւ փոքր բիզնեսին կառավարության կողմից տրամադրվող սուբսիդավորման ենթակա գումարը կազմել է 923,8 մլն դրամ:*

Նախորդ ամսվա համեմատ, այն նվազել է շուրջ 84,3 մլն դրամով՝ պայմանավորված, գերազանցապես, բնակիչ-բաժանորդների սպառած էլեկտրաէներգիայի ծավալների կրճատմամբ:

Ինչպես տեղեկացրին Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունից, համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած պաշտոնական տվյալների, բնակիչ-բաժանորդների կողմից սեպտեմբերին սպառած էլեկտրական էներգիայի սակագնի՝ ՀՀ կառավարության ստանձնած սուբսիդավորման ենթակա գումարի չափը կազմել է 901,2 մլն դրամ, նախորդ ամսվա 986,8 մլն դրամի դիմաց:

## ԱՎԱՐՏՎԵԼ Է ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

*Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության դեպքի առթիվ, Հայաստանի քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործով, հոկտեմբերի 16-ին նոր մեղադրանք է առաջադրվել Վ.Պերմյակովին:*

Քրեական գործով իրականացված նախաքննությամբ բավարար ապացույցներ են ձեռք բերվել առ այն, որ մեղադրյալի կողմից 2015 թվականի հունվարի 12-ին Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանությունը զուգորդվել է ավազակությամբ, բացի այդ, բնակարան ապօրինի մուտք գործելով եւ զենքի գործադրմամբ ավազակային հարձակման եղանակով՝ հափշտակվել է գույք, որից հետո փորձ է արվել ապօրինի հատել Հայաստանի պետական սահմանը:

Նույն օրը քննիչը մեղադրյալին հայտարարել է նախաքննության ավարտի մասին:

Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

## ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻՆ

***Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 22-ին Մադրիդում, աշխատանքային այցի շրջանակներում հանդիպում է ունեցել Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) նախագահ Ժոզեֆ Դոլի հետ:***

***ՀՀ նախագահը եւ ԵԺԿ նախագահն անդրադարձել են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ԼՂ հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի ներկա փուլին եւ առկա խնդիրներին: Զրուցակիցները մտքեր են փոխանակել նաեւ Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակի եւ փախստականների ճգնաժամի մասին:***

## ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԿՂԵԿԱՎԱՐԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԼԵԳԻԱՆ



***Հայաստանի նախկին վարչապետ, ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան, 55-ամյա Տիգրան Սարգսյանը 2016 թվականի փետրվարի 1-ից կանցնի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի պաշտոնին: Այդ մասին հոկտեմբերի 16-ին Ղազախստանում որոշումը կայացրել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստում:***

## ՄԳԻՄՕ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ

***Երեւանում մեկնարկել է Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (ՄԳԻՄՕ) շրջանավարտների երրորդ միջազգային ֆորումը: Միջոցառմանը մասնակցեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:***

***Միջոցառմանը մասնակցելու նպատակով, Հայաստան են ժամանել 300-ից ավելի մասնակիցներ շուրջ 40 երկրից: Բացման արարողությանը հաջորդեց Մոսկվայի Լազարյան ճեմարանի 200-ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ: Լազարյան ճեմարանը երկու կրթօջախներից մեկն է, որոնց հիման վրա կազմավորվել է ՄԳԻՄՕ-ն:***

***Ֆորումի բացման արարողությունից առաջ, մասնակիցները Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:***

## ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

***Հոկտեմբերի 20-ին, Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ, տեղի ունեցավ խորհրդակցություն՝ Հայաստանում ժողովրդագրական ներկայիս իրավիճակի եւ զարգացման միտումների վերաբերյալ: Խորհրդակցության ընթացքում ներկայացվել է ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2015-2017 թթ. ազգային ծրագրի նախագիծը, որը բխում է ՀՀ կառավարության 2014 թ. ծրագրից:***

***Քննարկվել են ինչպես ներկայում իրականացվող, այնպես էլ՝ առաջարկվող միջոցառումները, դրանց ուղղությունները, ֆինանսական ծավալը եւ ակնկալվող արդյունքները:***

## ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ՆՎԱԶԵԼ Է

***Այս տարվա հունվար-օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Հայաստանում առեւտրի շրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է ավելի քան 2 մլրդ 971,7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 5,4 տոկոսով:***

***Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, մանրածախ առեւտրի ոլորտում գրանցվել է 6,8 տոկոս նվազում, մեծածախ առեւտրի ոլորտում արձանագրվել է 2,9 տոկոս անկում. իսկ ավտոմեքենաների առեւտրի ծավալը, նախորդ տարվա առաջին ութ ամիսների համեմատ, նվազել է 7,4 տոկոսով եւ կազմել 49 մլրդ 528,5 մլն դրամ:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

*29.10.2015. Հիշատակ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետի*

*31.10.2015. Տոն բոլոր սրբերի՝ հների եւ նորերի, հայտնիների եւ անհայտների*

Հայ եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն սրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել Տոնացույցի կամ եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց սուրբ անունները գրված են երկնքի արքայության սրբազան մատյանում:

ՍԱՀՄԱՆ

## ՎՐԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ՝ ԿԱՐԾԱԽՈՎ

*Հոկտեմբերի 18-ին, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Ախալքալաքիի շրջանի Կարծախ գյուղի մոտակայքում, բացվեց «Կարծախի» նոր ավտոմոբիլային մաքսային անցակետը, որն ամենակարճ ճանապարհով ոչ միայն Վրաստանը, այլեւ Հայաստանը, Ադրբեջանը, Ռուսաստանը եւ Միջին Ասիայի երկրները կկապի Թուրքիայի կենտրոնական տարածաշրջանների հետ: Զուգահեռաբար թուրքական կողմից բացվել է «Աքթաշ-Չըլդըր» մաքսային անցակետը:*



Նոր անցակետի բացման արարողությանը մասնակցել են Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, Թուրքիայի առեւտրի ու մաքսային հարցերով նախարար Ջենափ Աշչըն, ինչպես նաեւ բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

Բացման արարողության ժամանակ նշվեց, որ անցակետը կնպաստի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը, կբարձրացնի երկրի տարանցիկ պոտենցիալը, տեղական բնակչության զբաղվածությունը, ինչպես նաեւ կնպաստի Վրաստանի ու Թուրքիայի միջով միջազգային հաղորդակցության զարգացմանը:

Նախատեսվում է, որ «Կարծախի» մաքսային անցակետը, որի թողունակությունը կազմում է օրական 500-600 բեռնատար եւ 10 հազար ուղեւոր, կբեռնաթափի վրաց-թուրքական սահմանին գործող «Սարպի» եւ «Վալե» մաքսային անցակետերը:

Մաքսակետը առայժմ գործում է ժամը 8:00-18:00-ը: Նշենք նաեւ, որ նոր մաքսակետից մինչեւ Արդահան մոտ 60 կմ է, Կարս՝ 80, իսկ մինչեւ Էրզրում 200 կմ:

### ԼԻԲԱՆԱՆԻ ԲԵՅՐՈՒԹ ՔԱՂԱՔԻ «ԳՈՀԱՐ» ԳՐԱԴԱՐԱՆԸ ԴԻՄՈՒՄ Է «ՎՐԱՍՏԱՆԻ» ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

*«Գոհար» գրադարանը ցանկանում է գնել հայերեն երգարաններ, հայերեն բառարաններ եւ Կիլիկիայի պատմությանը վերաբերող գրքեր:*

*Նրանք, ովքեր ունեն այդպիսի գրքեր եւ ցանկանում են վաճառել, խնդրում ենք դիմել «ԳՈՀԱՐ» գրադարանին հետեւյալ հասցեով՝*

KOHAR Library
P.O. Box 17-5511
243 Nahr Street
Beirut 1104.2050
Lebanon
Tel.; 961-1/447116 Fax; 961-1/445888
E-mail; info@koharlibrary.com

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ՏԵՐՆՈՊՈԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ 15 ՏԱՐԵԿԱՆ Է

*Հոկտեմբերի 18-ին, Թբիլիսիի «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնում, տեղի ունեցավ Ուկրաինայի Տերնոպոլ քաղաքի ազգային-պետական տնտեսագիտական համալսարանի՝ Երեւանի կրթա-գիտական ինստիտուտի ռեկտոր Սահակ Ղուդրատյանի հանդիպումը երիտասարդ թբիլիսցիների հետ:*



Սահակ Ղուդրատյանը մանրամասնեց իրենց կրթօջախի ուսումնադաստիարակչական աշխատանքները, ծանոթացրեց ինստիտուտում տիրող կարգուկանոնին, սովորելու պայմաններին՝ շեշտելով, որ ուսանողներին հնարավորություն է տրվում սովորել նաեւ վրացերեն եւ ուկրաիներեն, խորանալ այդ լեզուների իմացության մեջ:

Ռեկտորը պատասխանեց ներկաների հետաքրքրող հարցերին:

Շնորհանդեսին ներկա էր եւ ելույթ ունեցավ Վրաստանում Ուկրաինայի գործերի ժամանակավոր հավատարմատար Գրիգորի Նազարովը:

Միջոցառմանը ներկա էին նաեւ Վրաստանում, մասնավորապես՝ Թբիլիսիում, իրենց գործունեությունը ծավալած գործարարներ:

*ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏՈՒՆ» ԿԵՆՏՐՈՒՄ

## ԹԲԻԼԻՍՅԱՆ ՀԻՆ ՎՈԴԵՎԻԼՆԵՐԻ ՈԳՈՎ



*Թբիլիսահայերի պատմության մեջ սիրողական թատերական ներկայացումների բեմադրությունը խոր արմատներ ունի: Դրանից ստացվող օգուտը ավելի քան ակնհայտ էր, այն առանձնապես երիտասարդության շրջանում, կամա թե ակամա, դառնում էր բեմական արվեստի քարոզիչը, սիրողական թատրոնից շնորհալի դերասանները գնում էին պրոֆեսիոնալ ասպարեզ: Մինչեւ նախորդ դարի 20-ական թվականները թբիլիսահայ շրջիկ դերասանները լինում էին Վրաստանի առանձին շրջաններում, դպրոցներում, տոնավաճառներում, մյուս թատրոնների բեմերին, ցուցադրում ներկայացումներ...*

Վերջերս թբիլիսցի գրականագետ Արտյոմ Գրիգորենցը (Կիրակոզով) իր ուժերը փորձեց դրամատուրգիայում, ընդհանրապես՝ թատրոնում: Արդիականության թեմայով, սակայն թբիլիսյան հին վոդեւիլների ոգով նրա կատակերգական պիեսը ներկայացվեց մշակութային փոխկապերի «Կովկասյան տուն» կենտրոնում:

«Անտրեպրիզա ատտաշեի համար» ներկայացումը հեղինակի դեբյուտն էր թե' որպես բեմադրիչ ռեժիսորի եւ թե' որպես գլխավոր դերերից մեկի կատարողի ու երաժշտական ձեւավորողի: Բեմում նրա հետ միասին հանդես եկան թբիլիսյան ճանաչված բարդ Վախթանգ Արոշիձեն, նախկինում ժողովրդական թատրոնների դերասաններ, կենսաբանության ուսուցիչ եւ բանաստեղծ Գարրի Ղալամքարովը, նկարիչ ու գրականագետ Ջովաննի Վեփխվաձեն, ուսանողներ Իրակլի Գիորգոբիանին, Ելենա Բեգաձեն, բարձր դասարանցիներ, միաժամանակ նաեւ «Բազմազգ Վրաստան-համավրացական շարժում» միությանն առընթեր ժուռնալիստիկայի դասընթացի ունկնդիրներ Վլադ Պուգաչ-Գլեբովն ու Ալեքսանդր Ասոյանը:

«Կովկասյան տան» հարմարավետ բակում ավելի քան 100 հանդիսատես ոգեւորությամբ էր հետեւում բեմում ծավալվող իրադարձություններին, ծափահարություններ պարգեւում ներկայացման մասնակիցներին:

«Անտրեպրիզա ատտաշեի համար» ներկայացումը ծրագրվում է ներկայացնել նաեւ Վրաստանի այլ քաղաքներում:

*ԻՐԱԿԼԻ ՑԻՆՑԱՁԵ*
*Կոմպոզիտոր*

Վախճանվեց ճանաչված երաժշտագետ-տեսաբան, Մոսկվայի եւ Թբիլիսիի կոնսերվատորիայի պրոֆեսոր, Պ.Չայկովսկու եւ Ա.Խաչատրյանի ստեղծագործությունների հետազոտող, Արամ Խաչատրյանի աշակերտ ***Դեւիլ Հմայակի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԸ:***

Վրաստանի հայ երաժիշտների լիգան, «Վրաստան» թերթը իրենց ցավակցությունն են հայտնում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

«Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես ցավակցում է Աղասի Գեւորգյանին, նրա սիրելի հորեղբորորդու՝

***Միշա Հարությունի ԳԵՎՈՐԳՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ:



## ԽԱՉԲԱՌ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 6.Ե'վ Շահմուրադյանը, ե'ւ Խամփերյանցը: 9.Բառի մաս: 10.«... բացեմ այգուս մեջ» (ժող. երգ): 11.Ոչ մեծ, ոչ փոքր, այլ ...: 12.Մուլտֆիլմի հերոս: 14.Շատ ամուր: 16.Թբիլիսյան թաղային «օբյեկտ»: 19.Զոքանչի ամուսինը: 20.Աբու Հասանի ...ները: 24.Դարավոր ծառ: 25.Ծովափի, լողափի հագուստ: 27.Բագրատունի իշխան: 28.Կաթնամթերք: 29.Հայկական մակարոնեղեն: 30.Ցորեն, գարի, վարսակ: 33.Մամիկոնյան սպարապետ: 34.Դեմքի մաս: 36.Հանրահայտ դերասան ... Դելոն: 40.... Փանջիկիձե: 41.Հարմար, տեղին, ճիշտ ժամանակին: 43.Հայոց կաթողիկոս Պարթեւը: 45.Սոֆի ...: 46.Հայկական ֆիլմ «... եղբայրներ»: 47.Ծանրորդուհի Ավդալյանը: 48.Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններից: 49.Խորտակված նավ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 2.Ցեղի ղեկավարը: 3.... երաժշտություն: 4.Սափրվելու գործիք: 5.Փղի քիթը: 7.Մուրացանի դրաման: 8.Գետ Հայաստանում: 13.Հովի.Թումանյան. «Մի ... մեղրը»: 14.Թանկարժեք քարերի կշռաչափ: 15.Հայոց մայր գետը: 17.Չեխիայի գերագույն քաղաքը: 18.Երգերի, տաղերի ժողովածու: 19.Մաքուր, անեղծ, չպղծված: 21.Չկան տեսակ: 22.Էշի մեջքի «նստարանը», համետ: 23.Թբիլիսյան թռչուն: 24.Վիշտ, մեծ ցավ: 26.Մատաղ, նահատակ: 30.Գոյականի տեսակ: 31.Մկրտել, օծել: 32.Ռոքի արքա ... Գիլան: 33.Վերեւից հասած: 35.... Գիբսոն: 37.Երեւանյան լիճ: 38.Հայկական ժողովրդական երաժշտական գործիք: 39.Հայ անվանի գրող Իսահակյանը: 40.Հայոց թագավոր: 42.Հարթ, տափարակ վայր: 44.Իսպանացի հանրահայտ նկարիչ:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 7.Ուլյանով: 8.Լուծել: 9.Անի: 10.Զգեստ: 13.Կարծր: 18.Կիլտ: 19.Արարմունք: 22.Զնդան: 23.Իզաբել: 28.Անալի: 29.Ասալա: 32.Սուգ: 33.Թղիթ: 34.Ստինք: 37.Աթա: 39.Երեր: 41.Լերկ: 44.Ցենտ: 46.Ավվա: 47.Ամո: 49.Աուտ: 50.Սվարանց: 52.Գենա: 54.Արամե: 55.Դեմո: 56.Աս: 57.Անդուլ: 58.Ռոմի:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Էյվե: 2.Ծնոտ: 3.Սվաղ: 4.Ցլիկ: 5.Մծիրի: 6.Ոլորտ: 11.Գուրզ: 12.Սարդ: 14.Ակլան: 15.Ծլկել: 16.Հուն: 17.Ցքի: 20.Անքաղ: 21.Մանաթ: 24.Զագս: 25.Բալի: 26.Լիճք: 27.Օսաթ: 30.Սթար: 31.Լիտր: 35.Տուլա: 36.Ներվ: 37.Ավե: 38.Այտուցել: 40.Եհովա: 42.Եվլե: 43.Կարասի: 44.Ցորեն: 45.Նանդու: 48.Մսրա: 51.Ամա: 52.Գոռ: 53.Նամ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445